

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՌՅԿ-ՌՅԿ

Հ Ա Տ Ո Ր

ՁԱ



Ս. ՂԱՋԱՐ

1924

ՄԱՅԻՍ

ԹԻՒ Ծ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ս Ո Ր Ա Կ Ա Լ

1. « ՀԱՆԴԻՍ ԱՄՍՕՐԵԱՑ » ի Յունուար - փետրուար պրակին մէջ, Վարդանեանն Ս Ո Ր Ա Կ Ա Լ բառի ստուգաբանութիւնը կ'ուզէ տալ, յորում կէս ճանապարհին կ'ըսէ. « Նահապետեան անորոշ կացութեան մէջ է. անգիտակ Աճառեանի արտայայտութեան » զՍորակալը « կ'ուզէ ընթիւնուլ » զախոտակալ, որուն վրայ սակայն ինքն անձամբ կը տարակուսի իր դրած հարցական նշանովը ու աւելցուցած ոչինչ ըսող սա սողորովը. Ուստի սորակայն եթէ աղաւոր բառ չէ, ուրեմն « ախոտակայն » կը նշանակէ և որպէս՝ ».

Արդ մենք մեր ուղղագրութիւնները ըրած ենք ո՛չ մեքենարար և ո՛չ լոկ յիշողութեան վրայ յեցած կոչումներով, այլ նախապէս ուզած ենք թափանցել հեղինակի մտքը և զինքը իրմով ուղղագրել,

աղաւաղումս վերագրելով յետին ընդօրինակողներու: Երբ Ազաթանգեղոսի ուղղագրութիւններն երեցան « ԲԱԶՄԱՎԷՊ » ի մէջ, թիրեաքեանն Պարիսէն, խնդակցական նամակ մը գրեց, յայտնելով որ իմ ուղղածներու բազմազոյն մասը, իր ձեռքն ունեցած ընտիր օրինակի մը հետ համաձայն զտնուած են: Ուստի « սորակալ » բառը չկարենալով ստուգել Բիւզանդի միջէն, աղաւաղ կամ օտար մի բառ թուեցաւ, և որպէսն հարցականով մը թողուցինք՝ մեզէն աւելի զիտոնոց պարզաբանելու: Էւ քսան տարի վերջ Պետերս՝ եկած է այն եզրակացութեան, թէ « սորակալ » անձանօթ է բառգիրք յօրինողներուն՝:

Արդ կը փորձուիմ տարակուսի մէջ թարթափողներուն հարցականիս լուծումն տալ. անոր համար հարկաւոր է ընթեր-

1. Ուղղագրութիւն Ազգային Մատենադարան:

2. Հանդ. Ամս. անդ.

ցողին աչքի առաջ դնել խնդրի տակ եղած բնագիրը:

ՈՐԱԿԱԼ ԲԻԷԳԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՅ ԿԱՆՈՆԻ ՍՈՐԱԿԱԿԱԼԸ կամ ցանկին մէջ տարբերակով մը կրկնուած է բառը.

« Յաղագս թէ ո՛րպէս կամ զիա՛րդ կոչեցեալ եղև Արշակ արքայ ի Ծապհոյ արքայէ Պարսից, կամ զիարդ մեծարեցաւ ի մամեծ մեծապէս. կամ զիարդ զասակ Մամիկոնեան սպարապետն շայոց սպանամէր զՌուհաւ», կամ « զՍրբահաւ» ասպաստամիմ արքայիմ Պարսից»:

Ի՞նչ է միայն այսչափ և այս ձևով մինչև վերջ գրուած լինելը Բիւզանդի մէջ, կամ տարակուսի տակ չէր ինկնար, կամ մի ո՛ր և է լուծուեալ կը հանգստացնէր մտքերը: Ընդհակառակն Բիւզանդ բնագրի մարմնի մէջ պատմելով նոյն անցքն՝ տարբեր բառ մը երկիրցս կը գործածէ « ախոռապետ », յորմէ կը ծագի հակասութիւն մը. կամ նոյնութիւն մը կայ որ մեզ րանծանօթ է, որոյ մասին անդրազարձեր են բանասէրք: Բիւզանդ յետ պատմելու Շապուհի ըրած սիրալիր ընդունելութիւնը Արշակին և վասակին՝ որոնք « որպէս զեղբարս հարգատես անրամիտս յոփացեալք էին ի միում ուրախութեան և յանպատում ուրախութեան ուրախ լինէին» — կը յաւելու հետեւեալ եղերական զէպքը:

« Ապա եղև զէպ օր մի յաւուրց, եկմ եմուտ թագաւորմ շայոց Արշակ շրջել զասպաստամաւ միով զարքայիմ Պարսից. իսկ ԱՊՈՒՆՊՅՏՏ արքայիմ Պարսից մտտէր ի մերքս ի տամ ասպաստամիմ. իբրև տեսամէր զթագաւորմ, ոչիմչ առ լուս (լաւս) կալեալ մեծարեցա զմա, և ոչիմչ շուքս դնէր մմա, այլ և ամարգամս դնէր թշմամմաց, ասելով ի պարսկերմ լեզու՝ թէ այժից շայոց արքայ, եկ միստ ի իւրմա խոտոյ վերայ. զոր բամ իբրև լսէր սպարապետմ զօրալսարմ շայոց մեծաց, որում զասակմ կոչէր, ի Մամիկոնեան տոմմէմ, մեծաւ բարկութեամբ և բազում սրտմըտութեամբ բարկամայր. ի վիր առեալ զսուսերմ, զոր ընդ մէջմ ունէր, հարպալ ամդէմ ի տեղտջմ զԱՊՈՒՆՊՅՏՏ արքայիմ Պարսից զլիսատէր ի մերքս յասպաստամի ամդ »:

Այս հատուածին մէջ երկիրցս յիշուած է « ախոռապետն », և ոչ մի անգամ « սորակալն » որ ըստ սովորութեան Բիւզանդի

պիտի ասէր. « զխոռապետն զսորակալն արքային Պարսից »: Սակայն չկայ այդ կրկնութիւնն, ուրեմն իրաւացի է տարակուսիլ, թէ այդ բառը ցանկագրութեանց մէջ կամ պէտք է ընդունիլ աղաւաղ կամ մի օտար լեզուէ եկամուտ, որ բառգիրքներու մէջ մտած չէ, անոր համար որ անհասկանալի մնացած է:

Արդ մենք առաջինը չէինք այդ բառի « աղաւաղ կամ իսթարուած » ձևի վրայ տարակուսողն ու խորհրդածողը, այլ մեզէն յառաջ ամէն ուշիմ ընթերցող բնականաբար ինքն իրեն այս հարցումն պիտի տար. ինչ է « Սորակալ ասպաստանին արքային Պարսից » և « Ախոռապետ արքային Պարսից »ի միջի եղած տարբերութիւնն, մի և նոյն տեղոյ և մի և նոյն հանգամանքի և պատմուածքի մէջ:

Տրամաբանութեան հետեւելով պիտի աւելինք այն՝ ինչ որ ասած են Մ. Էմին, Լաուեր, Աճառեանն, որ տեղը և պարագաները կը համոզեն թէ զլիակարգութեանց կանոնին մէջ « Ռրակալ և Սորակալ » անպատճառ « ախոռակալ » կամ լաւ և « ախոռապետ հասկանալու է, ուստի մեր ուղղագրութեանց մէջ առաջարկեցինք « սորակալ »ը կարգալ « ախոռակալ », լաւագոյն ևս « ախոռապետ »:

Սակայն ընդ նմին մտածեցինք որ դաբերու ընթացքին հետ « Սորակալ »ն շարունակելով հանդերձ իւր անհասկանալի կեանքը, մի՛ գուցէ զայթապեան կամ աղաւաղ բառ մը լինի, և որովհետև լեզուագիտութեամբ զբաղած չէինք և լուսաւորութեան կեդրոնի մէջ չգտնուելուս, ինչպէս է վիճենա, այլ կողմասի խուլ անկիւն մը, որով պատեհութիւնն իսկ չուներինք գերմանական գիտնոց ուսումնական հրատարակութեանց մէջ թարթափելու և հմտացալու, համեստ հարցականով մը թողինք անելի գիտուններու՝ ճշդելու խնդրական բառը:

Իսկ վարդանեանն՝ որ առանց տեղոյն և պարագաներուն միա դնելու, ձեռնարկեր է նոր լուսաբանութեան, պիտի տեսնանք թէ ինչ անպատեհութեանց պիտի հանդիպի:

1. Բիւզ. Գ. ժ. 2.

ՈՐԱՍԱԼ Մենք, այո՛, յիբարե կ'անգիտանայինք Աճառեանի արտայայտութիւնը. բայց յարգելի բանասիրէն բան սովորիւ մեզի ամօթ չենք համարել այժմ, նոյնպէս և յառաջն. սակայն իրականութիւնն այս է, որ մենք վաղուց 1879 թ. սկսած էինք մեր ուղղագրութիւնները, իսկ 1903 թ. միայն գործով մը պատահելով Վենետիկ, «ԲԱԶՄԱՎԷՊ»-ի խմբագրութեան խոստացանք հատընտիր առնել և ղրկել տպագրութեան. 1904ին ուրեմն կովկաս էինք և Պարիսու մէջ հրատարակուող «ԲԱՆԱՍԷՐ»-ը կարդալու հաճոյցն չենք ունեցած, բայց նոյն տարին մեր ուղղագրութիւններն ղրկած էինք Վենետիկ, և Հ. Կ. Տէր Սահակեանը, մեր լուսահոգի և նահատակ եղբայրակիցն, սկսաւ անոնց տպագրութիւնը մաս առ մաս 1905 թ. «ԲԱԶՄԱՎԷՊ»-ի մէջ:

Այժմ որ գիտակ ենք Պր. Աճառեանի արտայայտութեան, հասու եղանք որ նա և մենք գնացեր ենք նոյն մտայնութեամբ, Աճառեանն ասում է. «Տեղէն դատուելով կրնայ գուշակուիլ թէ պիտի նշանակին [Որակալ և Սորակալ] «Զիսպան, ախոռապան, ախոռապետ». հմտօ՛ք նոյն երեսը. «Իսկ ախոռապետն արքային Պարսից նըստէր ի ներքս ի տան ասպատանին» ։ Ապահովապէս երկու ձևերն ալ խաթարուած են ։ Երկաթագիր գրութեան մէջ «Որակալ» և «Զիսակալ» շատ դիւրութեամբ կըրնային շփոթուիլ. Բ և Ի հագիւ կը տարբերին. իսկ Ո և Զ ձևերուն մէջ միայն տակի թին է որ զանազանութիւն կը դնէ»¹։ Արդ Պր. Աճառեանի և մեր ասածի միջև կայ ակնառու տարբերութիւն. հասկացողի համար ոչ, վասն զի երկուքս ալ միտ զնելով տեղույ և պարագաներուն եկած ենք այն եզրակացութեան, թէ «Որակալ և Սորակալ» պիտի նշանակեն «ախոռապետ» ։ Մենք գոհացեր էինք հարցականով մը մատնանշելու որ երկու ձևերու մէջ կայ աղաւաղումն, մինչ Աճառեանն զրում է.

«Ապահովապէս երկու ձևերն ալ խաթարուած են» աւելի ուժեղ բացատրութեամբ. Պարոն Աճառեանն զգուշութեամբ կը փորձէ միայն «Որակալ»-ը վերականգնել տաւերու նմանափոխութեամբ ասելով . «Երկաթագիր գրութեան մէջ «որակալ և ձիակալ» շատ դիւրութեամբ կընային շփոթուիլ. Բ և Ի հագիւ կը տարբերին. իսկ Ո և Զ ձևերուն մէջ միայն տակի թին է որ զանազանութիւն կը դնէ»² ։

Միշտ պարզելով մեր դէմի հեղինակութիւնն, պիտի ասենք որ այնքան էլ հեշտութեամբ չէին կընար շփոթուիլ: Նմանութիւն մը ընդ Բ և Ի, անցցէ. իսկ Ո ընդ Զ, ո՛չ. տարբերութիւնը շատ մեծ է: Քանզի միայն տակի թեր չէ, այլ ձախակողմեան կոակտացն, աջակողմեան կուգն, ձախակողմեան փորժբացն և տակի թեթ առ ի շեղ կտրուածքը, մէկի ուղղորդ դիրքը, միւսի կտրակ ձևը:

Հնարկ է ասել, որ նոյն իսկ «ձիակալ» կամ ձիապան, չի տար ճշդիւ այն ընդարձակ զաղափարն, զոր կու տան «ախոռակալ» կամ «ախոռապետ» բառերը, որ վարիչի, կառավարչի, զլխաւորի իմաստն ունին:

Ընկեր Աճառեանն «Սորակալ»-էն ձեռընպահ կը մնայ, զի Ս տարը բանասրկուի պէս նորամուտ է, կ'ըսէ, ու դժուար է մեկնելը: Բանասէրն այս անորոշ կացութիւնն ընդ լուրթեամբ կ'անցնի, և անշուշտ մտքին մէջ նոր արտայայտութիւն մ'ընկելու զբաղած է:

ԸՍՏ ՄՏԱՑ Փոքր ինչ յառաջ ցաւ յայտնեցինք Աճառեանի արտայայտութեան անգիտակ լինելնուս, ապա թէ ոչ հետեւելով երկաթագրերու համեմատութեամբ մերձաւորագոյններու ձևով և տեսակով, պիտի կարենայինք առաջարկել նաեւ հետեւեալ տարբերակներն.

ա. Նկատելով որ խօսքը արքունի ասպատանի շուրջն է փոխանակ «ձիակալ»-ի՝ կարելի էր նոյն հեշտութեամբ վերածել «Սորակալ»-ը պարակաձայն «ԱՍՊակալ»-ի: Բ. Նկատելով որ ասպատանը, ար-

1. Հանգէս Աժօրիայ, անդ.
2. Անդ:

բունի կալուածք մ'է, հարկաւ իւր մէջ կը բովանդակէր՝ բաց ի ձիերէ՛, և այլ տեսակի անասուններ, արքայի պիտոյից կամ զբոսանքի համար, ընդարձակ մտքով կարելի էր «Սփրակալ»ը կարգաւ «ԳՈՄ»-կալ» և գումարագետ:

Գ. Նկատելով որ սպանուողն արքունի ասպատաննի կառավարչն է, պետն է (ախոռակպետ) և անոր յանձնուած էր անշուշտ Որսարաններու հոգատարութիւնն, շատ դիւրութեամբ քան զչափ կարելի էր խարստութեամբ բառը, ամենաթեթեւ գործողութեամբ «ՈՐՄակալ»ը վերածել «ՈՐՄակալ»ի: Արդ որովհետեւ վարդանանն աւոււմ է. «ախոռակալ»ը և «ախոռակպետ» բնու չեն տարբերիլ ըստ ծագման և ըստ ասման», կը հետևի ուրեմն որ «ՈՐՄակալ»ն ունի է ընդ ՈՐՄակալ»ին: Բայց վասակի սպաննած «ախոռակպետ» եթէ գոհելիկ իմաստով հասկանանք, ինչպէս տեղն ու պարտաբաններն մեզ կը ստիպեն, պիտի աւսենք որ քաջագործութիւն մը չէ և ոչ վաղը վասակին՝ ապականելով իւր մշտական յոյժ սուրբ, սինլըոր ախոռակպետի արևոտով: Բիւզանդ որ պանծացնելով զբում է դէպքը, կ'ըսէ որ մինչև անգամ Շապուհ այնպիսի քաջասրտութեան և բազում աներկիւղութեան վրայ զարմացած էր, որով սպանուածը հասարակ մէկը եղած չէ, այլ ազատ, բարձր դիրք ունեցող կամ նախարարական պաշտօնակալ մը, արքային Պարսից: Արդարև վտանական Գահնամակի մէջ այսպիսի պաշտօնէութեան մը յիշատակութիւնն՝ ի շարս աւագ Կախարարաց կը գտնենք, ԿՍ. ՈՐՄԱՊԵՏՆ ԱՐՔՈՒՆԻ: Ասով վասակ հաւասար հաւասարի հետ կոտորե և յաղթե է, ոչ թէ թրիք շակող ախոռակպետի մը զուխը թռուցած է, խոտի խրճան վերայ միամիտ նստած ժամանակ: Եւ Շապուհ, փոխանակ բարկանալու «Իբրև վայս լսեք, բազում շնորհ ունէր զօրավարին վասակայ... վասն այնր իրաց մեծաւ սիրով սիրէր զնա»... Զարմանալի և անհասկանալի է Շապուհի այս վերաբերումն առ Արշակ և առ վասակ, և վերջնոցս խոնճապաւ և

գաղտագողի փախուսան Պարսից արքունիքէն:

ՍՊԱՆՈՒԹԵԱՆ Բիւզանդի վասակի շուրջ ԵԱՐԺԱՌԻԹԵՆ յերկրած առասպելախառն զրոյցն թուի հաստատուած լինել ժողովրդական առածի մը վրայ, որ կը պտուէր Պարսիկ ժողովրդեան բերանը, և ոչ ոք գիտէ ե՞րբ ծագումն և ծնունդ առած է Պարսկաստանի մէջ: Այս յայտնի է որ հէզ ախոռակպետն թուրքագրէն կրկնած է, ի տես Արշակի և վասակի անսպասելի այցելութեան պահուն, առանց մտածելու որ նոքա պարսկերէն հասկանալին Կա նստած տեղէն հեզագրէն կ'արտասանէ:

«Այժից չայց արքայ՝ եկ նի՛ստ
Ի՛ խրճան խոտոյ վերայ»:

վասակ այնչափ մեծ էր, որ ախոռակպետի խօսքերը շան հաշոց մը չարժէին իրեն համար: Բայց Բիւզանդ սպանել կու տայ, որպէս զի չասէ բուն շարժառիթը սպանութեան, զոր այլ կերպ կը յերկրէ, որակալութեան զրոյց մը ի մէջ բերելով իրկու Մամիկոնեան եղբայրնեւուն, որ միանգամայն կը գտնուէին Շապուհայ արքունիքը: Ըստ մեր տկար կարծեաց դէպքը և սպանութիւնն հետեանալ կերպով քացատրելու է:

Շապուհի կեղծաւորութիւնն, ցոյց տուած մեծ սէրն, չի հանդարտեցնիր Արշակի և վասակի սրտերն. վարմի մէջ ինկած կը զգան ինքզինքնին, և միանգամայն կասկած կը յարուցանեն Շապուհի մէջ, անոնց փախչելու դիտաւորութեան մասին, ուստի կը բռնազատէ զանոնք երզնուլ աւետարանի վրայ, հաւատարիմ մնալու իրեն հետ մինչև վերջ: Ոչ սակաւ խորամանկութեամբ կ'երշնուն. սակայն ասով իսկ դաւադրութեան մտմտուցն կը տանջէ զիրենք: Շապուհ իր «մեծ սիրոյն» և վատահոգութեան ապացոյց կը շնորհէ չափաւոր ազատութիւն մը հեռանալու արքունիքէն և ըստ կամս առանձին զբօսանքներ կատարելու: Իսկ Արշակ և վասակ փախչելու հնարք կը մտածեն. բայց ինչպէս և ինչո՞վ չ'աստի Բիւզանդ: Սակայն կարելի է այդ պակասն լրացնել

այսպէս: Արշակ և Վասակ, երդումն տալէն յետոյ, օգտուելով Շապուհի ակամայ բարեացկամութենէն, դէպ ի դարձ երթալով և հանգամանքները նպաստաւոր գտնելով կը մտնեն Շապուհի ասպատանած, ոչր էին անշուշտ և իրենց ձիանը կապուած: Վասակ նկատելով որ միայն ախոռապանն է հոն, որ կրնար զիրենք մատնել նոյն պահուն, մօտ երթալով և յանկարծ մերկանալով սուրբ կը գլխատէ « զՍորակալ ասպատանին », մինչ նա խոտի խրձան վրայ նստած, անկասկած եկուցնելու ելբար կը նայէր հետաքրքրութեամբ մտազբաղ:

Արշակ և Վասակ կը հծծնեն իրենցը կամ լաւագոյն ձիեր խուճապաւ կը փախչին ի Հայաստան. և մինչև և որ բանը հրապարակուի, նոցա արդէն իրենց ասպարէզն կտրած կը լինին և ապահովեալ ելած: Թէ ինչպէս նոցա Տիրգրունէն մինչև Հայաստան կըցան փախչիլ, առանց ձերբակալուելու. զայդ թող առէ նախ ինքն Ռիզաւանդ, գիտակ չորբորդ դարու ճանապարհներուն, որ առանց այլևայլութեան կը գրէ իրեն զիրացոյն Վասակի համար. « Կամեցա խանգար առնել ի մէջ Արշակայ թագաւորին Հայոց [և Շապուհ] և փախչի » (?): Փախած՝ որ փախած է, զոր Շապուհ ալ կը հաստատէ զարմացական հարցումով մը. « Զիւրթ կարէր ըստ հաւանութեան [հաւատարմութեան] ելանել երդմանցն և կամ փախչի » (!): Մենք մինչև հիմայ չենք ըմբռնած, բայց ինքն Շապուհ յետոյ պիտի հասկանար փախչելու գաղտնիքը, երբ երեսնամայ պատերազմեցրու մէջ, քաջաբար փախչող Վասակն ամէն անգամ իւր յողթական բանակներու զլուխն անցած, Ռիզաւանդին գրել պիտի տայ. « Առ հասարակ զօրսն զամենայն հարկանէին ի սուր սուսերի իւրեանց, և միաձի ձողպրեալ արքայն Պարսից Շապուհն Փլլեմէր »: Ինչպէս և մինչև սէր, չի սահը:

Թորչ ներուի մեզ այս փոքր շեղումն, և վերադառնանք մեր նիւթին, և դիտենք « զՍորակալ ասպատանին » որ խոտի

խրձի վրայ նստած, կը հրաւիրէ նաև Հայոց արքայն իւր կողքին բազմելու և կը հանդիպի ողորմ վարձատրութեան:

ՏԱՌԵՐՈՒ Հուսկ ուրեմն քսան տարի ՊԱՏՐԱՆՔԸ յետոյ, Պ. Աճառեանի արտայայտութեան զիտակ, հմտացած տառերու փոփոխութեան արուեստին, Վարդանեանն՝ իւր նոր ուսումնասիրութիւնն կ'առաջադրէ հետևեալ կերպով. « Մ և Խ, Բ և Ռ նշանագրերու աչքառու նմանութիւնը նկատուին նմանալով կը կարծեմ թէ տարալուսական « Սորակալ »ը պէտք է փոխել ու կարդալ « Խոռակալ »՝ իրրև նմանածև և նոյնանիշ Բ. Թագ. գրքին մէջ կիրարկուած « Խոռակալ » բառին. « Որդիք Դաւթի Խոռակալք էին », որուն դէմ յոյն բնագրին ունի սίολ Δαυιδ αυλάρααι ησαν. Նախ դիտել կու տանք որ վերի չորս երկաթապոք տառերու համեմատութիւնն կոչել « աչքառու նմանութիւն »՝ պէտք է համարել շղացութեան կամ այրբենական « զալտոնիքով » արդիւնը: Եթէ որ և իցէ տարալուսական բառի տառերը ըստ կամ փոխել ստիպուինք մեր ուզածը կարդալու համար, նոյն դիւրութեամբ մենք վերը կարելի մի քանի օրինակներ սուրբ և կարելի է դեռ ուրիշներ ալ կերտել. այնուհանդերձ որ աչքի առաջ ունեցանք « տեղը և պարագաները »:

Երկրորդ « Սորակալ »ն փոխելու և կարդալու համար « Խոռակալ » (յորմէ և « Խոռակալ ») յարգելի բանասէրն նկատեր է « իրրև նմանած և նոյնանիշ »: Եւ սխալն յայդմ իսկ է, ի նոյնպէս չառնելով « Սորակալ » ի « Խոռակալ » ի կամ « Խոռակալ » ի կիրարկութեան տեղն և պարագաներն:

Արդարև իրականութենէ կը հետևայ բանասէրն՝ երբ կը գրէ « նոյնածև և նոյնանիշ » բան չըսող տողերը, համեմատութեան դնելով Ռիզաւանդի ախոռը և ախոռապանը, Դաւթն արքունեաց և Խոռակալն արքայորդաց հետ: Համեմատութեան եզերքն սխալ են և հակասական՝ աչքառու տարբերութեամբ տեղոյն և պա-

րագալից, հետեակէս «Սորակալ»ը կարելի էլ փոխել «Խոռակալ»ի և ոչ կարդալ «Խոռակետ»։ Արեւելոյ շմանութիւն մը չի փոխեր երկու բառերու տարբեր իմաստն և նշանակութիւնն։ Ոչ միայն ատերեոյթ նմանութիւնն, այլ մի և նոյն բառն մեր և օտար լեզուներու մէջ ևս, տրամագծապէս տարբեր իմաստներ ունին, զոր օրինակ այր = մարլ, այր = քարայր, ակն = աչք, ակն = ազնիւ քար, հոր = ջրհոր, խոր, հոր = փեսայ և այլն։ Ուստի Խոռ ոչ է Ախոռ. և ոչ Խոռակետը, Դաւթի որդիք՝ կրնան լինել «Ախոռակետը» արքային Պարսից։

Ուրախ ենք որ բանասէրն իսկ փոքր ինչ գլխի հիասթափուած կը թո՛ւր այս ակնառու նմանութենէն և անդրադարձնել կու տայ թէ «մեր դասականներն» «Խոռակալ»ն և «Խոռակետ»ն միայն ԱՅՈՒԱՊԵՏ իմաստով հասկացեր են, առանց միտ զննելու որ իրենց (միայն իրենց) ըմբռնու մով Դաւթի որդիներու պաշտօնը կը մըթագնի». ոչ թէ կը մթագնի միայն, այլ և կը կերպարանափոխի։ Ինչ օգուտ ուրեմն ասել. «ինչ որ ալ ըլլան տրուած մեկնութիւնները՝ մեզի համար սա միայն ստոյգ է թէ «Խոռակալ» և «Խոռակետ» չեն կրնար իրարմէ տարանջատուիլ, ո՛չ ծագումով և ոչ նշանակութեամբ»։ Այս համոզումն ոչինչ չ'ասեր ինդրական «Սորակալ»ի մասին, վասն զի հարկաւոր էր ասպացուցանել թէ «Խոռակալ»ն ո՛չ ծագումով և ոչ նշանակութեամբ կը տարանջատուի «արտապետ» չն, որ երկիցս կրկնուած է Բիւզանդի մէջ իբր նշանակութեամբ անանջատ «Սորակալ»էն։ Համոզիչ պիտի լինէր վարդանանի ձեռնարկութիւնն՝ եթէ կանխէր Դաւթի որդիներու տրուած տիտղոսն «Խոռակետը»ն բացատրէր, և խոս բառի նշանակութիւնն ստուգէր հանդէպ բացայայտ «տիտղոս»։ Հիւպշման իւր բառգրքին մէջ «Խոռակետ»ի դէմն հարցական մը դրած է, մինչ ինքն ալ ՀԲ. Թիւրքացեանի և այլոց պէս, արքայորդոց դիրքէն կրնար մակարեւել՝ «բարձրութիւն մը, վսեմութիւն մը պատուի

և բարձի»։ Մենք ալ որ հարցական նշան զննելու սովորութիւնն ունեցած ենք, մեր չզիտցածն չըսելու համար, այս տեղոյս մէջն թերևս անցնէինք նոյն նշանով, եթէ հարկն չստիպէր ըստ մեր տկար կարծեաց, ճշդել ըստ կարեւորն «Խոռակետութեան» պաշտօնը՝ զոր ունէին Դաւթի որդիք իրենց հօր արքունեաց մէջ, ցուցանելու համար թէ զաղափարի շարակարգութիւն մը չկայ զայն համեմատելու Պարսից արքայի ասպատանի «արտապետութեան» հետ, հետեակէս «Սորակալ»ն անձեռնմխելուրէն թողնելու է իւր մթին վիճակի մէջ, որ է ԱՅՈՒԱՎԱՅՈՒՆԹԻՒՆ իւր հարագատ լեզուի նշանակութեամբ։

Հ. Գ. ՆԱԶԱԳԵՏԱՆ
(Շարունակելի)

ՀԱՅ ԶԵՆՈՎԻՐ ՂՈՒՐԱՆ ՍԻ Ի ՀՆՂԻԿԱ

(Թրգ՝ Սրբէանս Վարդգէսի Իւրփայտ)

Յորդորանօք և աջակցութեամբ գրասիրին Յովհաննու Ալզաւեան հաստատեցաւ յամին 1828 Հայկական Մատենադարան մի ի «Հայկեան Մարդասիրական Ճեմարանին» կալկաթա քաղաքին՝ «Արարատեան գրադարան» կոչեցեալ, ուր յանցանել ժամանակաց հաւաքեցան բազում Հայ մատենար, թէ՛ ձեռագրեալ և թէ՛ տպագրիք, և ես լուեալ եմ ի նախկին աշակերտացն Ճեմարանին՝ որք յոտս Յովհաննու Ալզաւեանի էին աշակերտեալք, թէ գտանէին մի հազար հատորք «յԱրարատեան գրադարանին» 50 ամօք յառաջ։

Յաւուրս ուսանողութեան իմում ի Մարդասիրական Ճեմարանին յամին 1890, տեսանէին ի բաց գրադարանի երեք տխուր բեկորք միայն համբաւեալ մատենադարանին, — քանի մի պատաստուն և անկազմ գրեանք — իսկ ի ձեռագիր մատենից և ո՛չ մի նմոյշ, զի մինչ իսպառ անհետացեալ էին այնորիկ յերեսաց եպերելի անհոգութեան Հոգաբարձուացն ժա-